ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 03 » հոկտեմբեր 2025թ. No 6067 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 120.15-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/4760-25 առ 30.09.2025թ. գրությունը և ռեֆերենտ երկրների փորձագիտական եզրակացությունները.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը լիազոր մարմնի նախաձեռնությամբ փոխադարձ ճանաչելու (ԵԱՏՄ գրանցման փոխադարձ ճանաչում) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 2 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 120.15-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի հոկտեմբերի «03 » - ի N6067 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը լիազոր մարմնի նախաձեռնությամբ փոխադարձ ճանաչելու

ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Ռեմիֆենտանիլ	ռեմիֆենտանիլ (ռեմիֆենտանիլ հիդրոքլորիդ)	դեղափոշի լիոֆիլիզացված ն/ե ներարկման լուծույթի	2մգ; (1) ապակե սրվակ 6մլ, (5) ապակե սրվակներ 6մլ	Մոսկվայի էնդոկրինային Գործարան ՖՊՈՒՀ, Նովոխոխլովսկայա փ. 25, շ 1, Մոսկվա, 109052- որակի և բաց թողնման հսկող, "Մոսկվայի էնդոկրինային Գործարան ՖՊՈՒՀ", Նովոխոխլովսկայա փ. 25, շ 2, Մոսկվա, 109052, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող	Ռուսաստան	"Մոսկվայի էնդոկրինային Գործարան ՖՊՈՒՀ", Նովոխոխլովսկայա փ. 25, շ 1, Մոսկվա, 109052	Ռուսաստան	Դ	23469 (010088) 29.09.2025
2	Ռեմիֆենտանիլ	ռեմիֆենտանիլ (ռեմիֆենտանիլ հիդրոքլորիդ)	դեղափոշի լիոֆիլիզացված ն/ե ներարկման լուծույթի	5մգ; (1) ապակե սրվակ 10մլ, (5) ապակե սրվակներ 10մլ	Մոսկվայի էնդոկրինային գործարան ՖՊՈՒՀ, Նովոխոխլովսկայա փ. 25, շ 1, Մոսկվա, 109052- որակի և բաց թողնման հսկող, "Մոսկվայի էնդոկրինային գործարան ՖՊՈՒՀ", Նովոխոխլովսկայա փ. 25, շ 2, Մոսկվա, 109052, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող	Ռուսաստան	"Մոսկվայի էնդոկրինային գործարան ՖՊՈՒՀ", 25, Նովոխոխլովսկայա փ., Մոսկվա, 109052	Ռուսաստան	Դ	23470 (010088) 29.09.2025